ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
44	մարտական հանդերձանք	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Կոստյում՝ ձմեռային, գունաքողարկված, կեպիով, ՍԶ սպայական /մեկ հատը ներառում է բաճկոն և տաբատ, կեպի/: Ձմեռային մարտական համազգեստը (կոստյումը) արտադրվում է գունաքողարկման թելի C-9961 արտիկուլի կամ համարժեք, «ռիպստոպ» տեսակի ամրապնդված, ջրայուղաանդրադարձնող ծածկույթով գործվածքից, 1մ2 մակերեսային խտությունը՝ 190-220գր, բաղադրությունը՝ 35% բամբակ, 65% պոլիէսթեր, (թույլատրվում է բամբակի բաղադրությունը բարձրացնել մինչև 50%) գույնը ՍԶ գունաքողարկմամբ, երկգույն գունաքողարկող, ըստ նմուշի: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ: Ձմեռային կոստյումը ամբողջությամբ տաք ներդիրով է, բաղկացած է բաճկոնից և տաբատից: Բաճկոնը ուղիղ ձևածքով է, թիկունքը և առաջամասը անջրաթափանց, քամապաշտպան շերտով, առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց

			արհեստական կտորով, երկկողմանի մզդակարված 350 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով միակողմանի մզդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառը մշակվում է 90 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորից, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր: Բաճկոնի թիկունքամասը և առաջամասը մշակված է վրակարված կոկետկայով, երկու կարանի: Առաջամասերում մշակված են 2 կողային վրադիր կափույրով փակվող գրպաններ, որոնք կողքից բացվածքով են (ներքին կրկնակի գրպաններ, ստորին հատվածում ամրակարված են): Գրպանի լայնությունը 20սմ, երկարությունը 22սմ, կափույրի լայնությունը 5,8-6,5սմ, որոնք կոճկվում են գաղտնի կոճվածքով՝ 2 օղակ կոճակով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0,5-0.6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 1 մմ կարի լայնությամբ: Բաճկոնի թևքերը բաղկացած են երեք կտորից, առանց ուսագլխի կարի /ռեգլան ձևի/, կարված են փակ զույգ կարերով: Թևքերի վերին հատվածում մշակվում են կափույրով փակվող թեք վրադիր գրպաններ, լայնությունը 14-14,5սմ, խորությունը 15-15,5սմ, կափույրի լայնությունը 6-6,5սմ: Կափույրները կոճկվում են զույգ կոճակներով՝ գաղտնի կոճկվածքով: Գրպանների թեքությունը դեպի ներս, ուսակարերի կենտրենական առանցքի նկատմամբ՝ 15 աստիճան: Վրադիր գրպանների կափույրները զարդակարված են 0.5սմ լայնությամբ կարով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Թևքերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ, կրկնակի զարդակարերով ուղղանյունաձև /երկու անկյունները շեղ/ արմնկակալներ, իսկ թևքերը հավաք պահելու համար արմնկակալների հակառակ հատվածում՝ ծալվող մասում, ներկարված են 3 սմ լայնքով գաղտնի, կարգավորվող, ռեզինային ձգաններ: Թևքերի ներքևի մասում մշակված են թևքի լայնությունը կարգավորող, ձգվող պատաններ, որոնց կարգավորումն իրականացվում է 2հատ կոճակով և 1 հատ օղակով: Ձախ թևքի վրադիր գրպանի կենտրոնում կարվում է «ՀՀ ԱԱԾ» թևքանշանը: Աջ

			թևքի վրադիր գրպանի կենտրոնում կարվում է «ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ» թևքանշանը: Բաճկոնի կոկետկայից 3սմ ներքև աջ կողմում կարվում է կրծքանշան «ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ», իսկ ձախ կողմում կարվում է 13-14սմx2.8սմ ձևաչափի ինքնակպճուն ժապավեն, կրծքանշան «ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ» համար: Բաճկոնը միալանջ է, գաղտնի կենտրոնական կոճվածքով, կոճկվում է 70 սմ երկարությամբ, խոշոր ատամներով /տրակտոր տեսակի/ շղթայով, մեկ գլխիկանի (գլխիկի չափսը № 6): Բաճկոնի շղթան ծածկվում է 7.5 սմ լայնությամբ կափույրով, որը կոճկվում է 5 հատ փակ գաղտնի կոճկվածքով, 18մմ-անոց կոճակով: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 2սմ: Թևքերի ներքևի եզրերին, դաստակի հատվածում առկա են դեղնականաչավուն կամ դարչնագույն գործվացքից կրկնակի ծալակարված, քամիապաշտպան մանժետներ, որոնց վրա բթամատին անցկացման համար արված են անցքեր (ըստ նմուշի): Բաճկոնի գոտկատեղի ուղղությամբ մշակվում է գաղտնի գոտկանման պարան իրանի հարմարեցման չափսերի կարգավորման համար: Բաճկոնի վզատեղին մշակված է կտրած կանգունակով օձիք: Օձիքի լայնությունը միջնամասում 13սմ, ներսի կողմից մշակված կանաչ գույնի ֆլիս տեսակի կտորով, որի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի հետադարձ երեսին մշակվում է եզրեր 6սմx2.5սմ կպչուն ժապավենով (3-4 հատ) փակվող տոպրակացու կտոր, որի մեջ տեղադրվում է գլխանոցը /կապյուշոն/: Գլխանոցը կարվում է երեսացու կտորից՝ մեջը աստառով, որը բաղկացած է 3 կտորից՝ դիմային մասի երկու կտորները երկարացված են յուրաքանչյուր կողմից 16-17սմ, որոնց յուրաքանչյուրի վրա կարված է 2 զուգահեռ կպչուն ժապավեններ 8սմx2.5սմ ձևաչափի, նախատեսված դեմքի ծնոտային հատվածը ցրտից և քամուց պաշտպանելու համար, դիմային մասով անցնում է գաղտնի 3մմ-5մմ կլոր էլաստիկ ժապավեն, երկու կողմից պլաստմասե կարգավորիչներով: Գլխանոցի հետևամասը վրադիր կտորով է, որի միջով անցնում է 3մմ կլոր էլաստիկ ժապավեն /ռեզին/ պլաստմասե կարգավորիչով և 10սմx3.5սմ

			ձևաչափի կարգավորիչ լեզվակով, որը ամրանում է գլխանոցին ինքնակպչուն ժապավենով: Գլխանոցի վրա՝ օձիքի միացման կարից 1.5սմ վերև մշակվում է 3 հատ 6սմx2.5սմ կպչուն ժապավեն տոպրակացու կտորի կոճկման համար: Լանջափեշի ձախ կողմում շղթային զուգահեռ մշակված է գաղտնի ծոցագրպան (20սմ խորությամբ) ատրճանակի համար, որը կոճկվում է 16սմ երկարությամբ շղթայով: Գրպանի ներսից ամրացվում է քուղ՝ մետաղական ամրակով: Բաճկոնի աստառի ձախ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է կոճակով և օղակով: Ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ (5սմ*9,5սմ) ախլակների վրա նույն գործվածքից, սլաքաձև ախլակները կոճկվում են մեկ դեղնականաչավուն գույնի կոճակ օղակով: Տաբատը ունի կոնքային հատվածում լայն ձևվածք, մշակված է լայն գոտիով, որը շեղանկյուն ձևով՝ 8սմ քայլքով զարդակարված է: Տաբատի լայն ձևվածքը ապահովում է տաք ներքնաշորի վրայից հագնելու ծամանակ մարտիկի շարժումների ազատությունը: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով է, խորությունը՝ հաշված գոտուց, 22-24սմ: Գրպանի վերնամասը կիսակամարային ձևվածքով է, (բերանը 14-16սմ բացվածքով) մշակված է 0.6 սմ լայնությամբ զարդակարով՝ ծայրերը ամրակարված: Գոտու վրա տեղադրված են 8 կամրջակներ, յուրաքանչյուրը 5.5սմx1.5սմ ձևաչափի՝ ամրակարված: Հետևի մասի 2 կամրջակները ամրակարված են և կարող են ավելի լայն լինել, որպեսզի ապահովեն՝ կախոցի և պարանի միջոցով, քաշելով, մարտիկի դուրս բերումը կրակի գոտուց: Ծնկների հատվածում՝ առաջամասում վրակարված են ծնկակալեր: Տաբատը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, 18-20սմ-անոց շղթայով և գոտու վրա՝ 2 հատ (վերևի և ներքևի) 22 մմ տրամագծով օղակ կոճակներով: Տաբատի ներդիրը մշակվում է մզդակարված, անջրաթափանց գործվածքից աստառի հետ 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը անցնում է գոտուց մինչև տաբատի ստորին եզրից 15 սմ բարձրություն (15սմ-անոց փողքի հատվածը կիսաճթքավոր կոշիկի մեջ մտնող մասն է): Տաբատի փողքային մասի ծալվածքի միջով անց է կացվում սև, 3մմ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ԱԱԾ-ՏԵՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
44			տրամագծով ռետինային քուղեր, կամ սև մանժետներ, որոնց ծայրերը դուրս են գալիս ծալվածքի ներսից արված անցքերից: Հետնամասում գոտին լայնացրած է (ունի զիգզագաձև կտրվածք) և ամբողջությամբ զարդակարված է: Առաջամասի կողքերից կափույրով երկծալ վրադիր գրպաններ են, լայնությունը ներքևում՝ 20սմ, վերևում՝ 22սմ, խորությունը 25սմ, կափույրի լայնությունը 7սմ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 հատ կոճակով: Վրադիր գրպանների եզրերը, ծնկակալները զարդարված են զուգ ասեղ զարդակարով: Ձմեռային կեպին բաղկացած է կոշտ հովիտից, միջնամասից, կողամասերից, իստակից և ականջակալներով ծոծրակամասից: Երեսպատն՝ ձմեռային կոստյումի գունաքողարկված գործվածքից՝ գունաքողարկման թելի C-9961 արտիկուլի կամ համարժեք, «Ռիպստոպ» տեսակի ամրապնդված, ջրայուղաանդրադարձնող ծածկույթով գործվածքից, 1մ2 մակերեսային խտությունը՝ 190-200գր, բաղադրությունը՝ 35% բամբակ, 65% պոլիէսթեր, գույնը ՍՉ գունաքողարկմամբ: Աջ ականջակալին կարվում է՝ 8 սմ երկարությամբ տիսմայե ժապավեն, որի վրա ամրացված են 2 հատ մետաղյա կոճգամի մտնող մասերը ականջակալի եզրակարից դեպի ներս՝ 1-ինը 2սմ, 2-րդը՝ 3-4սմ հեռավորության վրա, իսկ ձախ ականջակալի վրա եզրից դեպի ներս 2 սմ հեռավորության վրա ամրացվում է՝ 1 հատ մետաղյա կոճգամի ամրացվող մասը: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափը, տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Ականջակալներով ձմեռային կեպին կարվում է մուգ մոխրագույն արհեստական մորթուց, 900 գրամ/մ2 մակերեսային խտությամբ, մորթախավի բարձրությունը՝ 11-13մմ: Ականջակալ-ծոծրակամասի մորթին մշակվում է եզրերից 5-7մմ հեռավորության վրա՝ զարդակարով: Ներսամասը 5-6 սմ կողմերով քառակուսաձև մգդակարվում է 90 գրամ մակերեսային խտությամբ բաճկոնի և տաբատի աստառացու կտորից, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր, ներսից տաքացնող ներդիրը մշակված է

			100 գրամանոց սինտեպոնով: Հովհարի ներսից ներկարվում է 2,0-2,5մմ հաստության պլաստմասայե միջադիր: Եզրից դեպի ներս 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Գլխարկաբոլորքի բարձրությունը, սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 9,0 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը՝ սկսած 54 չափսի գլխարկից պետք է լինի 8,4 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Կեպիների հովհարը արտադրվում է կլորավուն (կիսալուսնաձև) և մեջտեղի մասում 6,0-6,5 սմ լայնությամբ: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է ալյումինե համաձուլվածքից, օվալաձև կանաչավուն գույնի գլխարկանշան՝ 32 ճառագայթով: Կենտրոնական մասը ՀՀ դրոշի շերտագծերից՝ վրայից հնգաթև աստղ: Արտաքին տեսքը՝ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացվող նմուշի: Բոլոր պարամետրերի, չափումների թույլատրելի շեղումները՝ 2%: Կրծքանշան «ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ» պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ձգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի «ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ»: Տառի բարձրությունը՝ 10մմ, լայնությունը՝ 6սմ, իսկ պատի հաստությունը 2մմ: Կրծքանշանի պատրաստի չափսերը 12.8սմx2,8սմ: Կրծքանշան «ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ» պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ձգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի «ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ» նշումները, համաձայն պատվիրատուի կողմից տրամադրված սանդղակի: Տառի բարձրությունը՝ 15մմ, լայնությունը՝ 13մմ, իսկ պատի հաստությունը 2.8մմ: Կրծքանշանի պատրաստի չափսերը 12.8սմx2.8սմ: Կրծքանշանի տակի շերտին տեղադրվում է ինքնակպչուն ժապավեն /լիպուչկա/: Թևքանշան «ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ» պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ձգվող

			ջրակայուն շերտով, սահմանված ձևի, որի վրա կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է ասեղնագործված լինի «ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՁՈՐՔԵՐ» և ՀՀ ԱԱԾ զինանշանը: Թևքանշանի պատրաստի չափսերը 8.3սմx8.3սմ: Տարբերանշանների արտաքին տեսքը՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. սեպտեմբերի 17-ի N 1217-L «ՀՀ ազգային անվտանգության մարմինների զինծառայողների միասնական համազգեստը և տարբերանշանները հաստատելու մասին» որոշման: Պիտակավորումը: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ (պիտակի չափսերը 4-4,5սմ * 5-5,5սմ), որի վրա պետք է նշված լինի. արտադրող կազմակերպության անվանումը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն /լվացքի 300C ջրի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման/: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Կեպիի փաթեթավորումը՝ գործարանային, արկղերով, մեկ արկղի մեջ՝ երեք շարք, յուրաքանչյուր շարքում 18 հատ առանձին-առանձին՝ ընդամենը 54 հատ: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված: Մարտական համազգեստի ձևը և գունավորումը, չափումների բնութագրին համապատասխանությունը ստուգելու համար, մինչ արտադրելը, Պատվիրատուին է ներկայացվում 3 լրակազմ (48/4, 52/3, 58/2 չափս-հասակի) արտադրանքի փորձանմուշներ: Երեսացու կտորի ներկի կայունությունը համաձայն ԳՈՍՏ 29298-2005: Հանդերձանքի յուրաքանչյուր

			մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Արտադրվում են 44/2 մինչև 66/6 չափս-հասակի: Պատվիրատույի հետ նմուշների արտաքին տեսքի, օգտագործված նյութերի և չափսերի համապատասխանության ճշտությունը համաձայնեցվելուց հետո Կատարողին տրամադրվում է չափս-հասակային, արյան կարգերի քանակական տվյալները, խմբաքանակը արտադրելու համար: